

# ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ “ԼՈՌԵՑԻ ՍԱՔԾԻ” ԺԱՄԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԵՒԱ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ  
mnacakanyaneva@mail.ru

Բացադիկ մեծ է Յովհաննես Թումանեանի դերը պոեմի գրական սեղի զարգացման գործում: Նա քնարավիպական այդ սեղը հասցել է դասական կատարելութեան եւ հայ գրականութեան պատմութեան մէջ մնացել որպէս հասարը չլունեցող խոշորագոյն վարպետ: Պատահական չէ, որ դեռևս 1890ին, երբ նոր էր ներկայանում ընթերցող հասարակութեանը, նրա ստեղծագործութիւնների մէջ բարձր էին գնահատում յատկապէս պոէմները («Լոռեցի Սաքօն», «Մերիի», «Ալեք»): Տեղին է յիշատակել 1902 Յովհի 21ին Աւետիք Խսահակեանի՝ Թումանեանին ուղղրած նամակի հետևեալ միտքը. «Բայց ինչ էլ որ յինի՞յ քո պոէմներդ՝ մեր գրականութեան մէջ դարաշրջան են կազմելու»<sup>1</sup>:

Թումանեանի գրական ժառանգութեան անփոխարինելի մաս կազմող պոէմների մէջ առանձնանում է «չարչարուած»<sup>2</sup> մի գործ՝ «Լոռեցի Սաքօն»: Դեռևս ոչ մի երկ այնպիսի թէական վերաբերունքի եւ քննութեան, հեղինակային փոփոխութիւնների<sup>3</sup> եւ մշակման չի ենթարկուել, ինչպէս այս պոէմը: Քննադառութեան թիրախն են եղել պոեմի թեման եւ հերոսի՝ սնահաւատութեան ազդեցութեամբ խելագարուելու հոգեբանական պատճառաքանուածութիւնը: Էդուարդ Զրբաշեանը Թումանեանի Պոէմները արժէքաւոր աշխատութեան մէջ համոզի փաստարկումներով հիմնարում է պոեմի հիմքում ընկած կենսական փաստի հաւանականութիւնն ու հասատիութիւնը<sup>4</sup>:

Մեր խնդիրն է պատմական հեռանկարի մէջ դիտարկել պոեմին տրուած ժամանակի գնահատականը պարզաբանել՝ ե՞րբ եւ ո՞մ կողմից է առաջարրուել այս կամ այն հայցակէտը, եւ դա ինչ փոփոխութեան է ենթարկուել ժամանակի ընթացքում:

Սոացինը Ղազարս Աղայեանն էր<sup>5</sup>, որ, մինչ Թումանեանի Բանասպեղծութիւններ անդրանիկ ժողովածովի տպագրուելը ծանօթ լինելով պոեմին, բարձրածայնում է իր առարկութիւնները Սաքօյի խելագարուելու փաստի՝ հոգեբանորէն արդարացուած չլինելու վերաբերեալ: Թումանեանը 1890 Յովհի 29ին Ասուշատն Արովեանին ուղղած նամակում գրում է. «Կարդացինք «Լոռեցի Սաքօն»։ «Աղայեանը նոյնիսկ առաջին գորերից շար բժախնդիր լինելով, ես սկիպուեցայ

պահպանողական դիրք բռնել միմեանց չգիշանք այնպէս որ բանը վիճարանութեան փոխութեց (բայց իհարկէ մեղմ): Դու կէսը չհասած մի գոռզողոց սարբեց, թէ բոլորովին հոգեբանութեանը հակառակ է Սարդին ինելագարեցնելը: Ես հակառակն ապացուցեցի, բայց նա դժգոհ իմ բացադրութիւնից այսպիսի հարցեր առաջարկեց.- գրարուայ ո՞՛ Եղանակին է ինելագարուում: Նրանց ցեղում էլ ինելագար Եղած է՛յ թէ չէ. ինչո՞ւ չէ ինելագարուած փախչեիս մի քարից վեր ընկնում մնունում...»<sup>5</sup>:

Ինչպէս տեղեկանում ենք նամակից, վիճարանութեանը ներկայ են Եղել նաև Պերճ Պոօշեանը, մանկավարժ Սարգիս Բեկնազարեանցը, որոնք ընդդիմացել են Աղայեանին՝ պումը համարելով «հրաշալի»: Վերջինս, յայտարարելով, որ «Նրանք հոգեբանութեան այրեն էլ չգիտեն», մնում է նախկին համզմունքին<sup>6</sup>: Հետաքրքրական է, որ նոյն դիտարկումը անում են նաև Մոսկովայի ոսանողները, որոնք նոյնպէս մինչ առաջն ժողովածով տպագրութիւնը ծանօթացել էին Թումանեանի ստեղծագործութիւններին: Մեծ հիացմունքով ու ոգեւորութեամբ ընդունելով նորայայտ բանաստեղծի մոտքը գրական աշխարհ, այնուամենայնի, ուսանողորդինը հեշեցնում է որոշակի առարկութիւններ՝ Սարդին հոգեկան աշխարհի, ինելագարութեան առնչութեամբ: Ներսիսեան Դպրոցի շրջանաւարտ Բագրատ Թումանեանը, Մոսկովայից ուղարկուած Նոյեմբերի 10ի նամակում գրում է. «Սարդին» համար ասում են, թէ դա մի փոքր անքնական է, թէ նա այդպէս շուրջով չէր կարող ինելագարուել»<sup>7</sup>: Նամակագիրը, սակայն, միանգամայն իրատեսական եւ նոյնիսկ ծանօթ է համարում պումում պատկերուած երեսոյները. «թէ՝ իմ գրադիս պատմածները եւ թէ՝ զանազան հանգամաներներում ինձ հետ եղած պատահարները, բոլոր այսդեղ պարզ նկարած է»<sup>8</sup>. գրում է Բ. Թումանեանը յաջորդ նամակում:

Այսպիսով, դեռեւ ծեռագիր վիճակում «Լոռեցի Սարօն» դառնում է ընթացական եւ վիճարանութեան նիփօ: Տեղին է յիշատակել գրականագէտ Զաւէն Աւետիսեանի ոչագրաւ դիտարկումներից մէկը<sup>9</sup>, թէ՝ Աղայեանի համար ընթերցուած ծեռագիրը պումի նախնական տարբերակն է Եղել, եւ 1889ի անդրանիկ գրքի տպագրութիւնից առաջ Թումանեանը «ծեռագիր պումը ներարկել է փոփոխութեան» աշխագեղով հաշորի նսպել Աղայեանի կարծիքի հետո»<sup>10</sup>: Այս կարեւոր դիտողորդեան օգտին է խօսում նաև այն, որ Թումանեանի Երևերի առաջին լույց ընսարատը՝ Մանուկ Արեդեանը, գրախօսելով Բանասպեղծութիւններ ժողովածուն<sup>11</sup>, այդ թում նաև «Լոռեցի Սարօն», գրականագէտին յատուկ խոր Ներքնատեսութեամբ բարձր է զնահատում պումը եւ համարում յաջորդուած՝ նախեառաջ հոգեբանական ճիշտ լուծումների տեսանկինից: «Մեր վիսերգական բանասպեղծութեան մէջ.- գրում է

Արելեանը,- այդ երեք քերթուածները («Լոռեցի Սարօն», «Մեհրի», «Ալեք») չունեն իրենց նմանը թէ՝ կենդանովեամբ, թէ՝ զգացմունքների թնականովեամբ, թէ՝ գրալիշ, սահուն եւ, որ գիշատրն է, կանոնաւոր գեղեցիկ լեզուով»<sup>14</sup>:

Անդրադառնարվ «Լոռեցի Սարօն»ին՝ գրախօսը ընդհանուր գծերով ներկայացնում է պոէմի բովանդակութիւնը՝ ուշադրութիւնը բեւենելով աներկիշտ հսկայ Սարօնի կերպարին, տախուն նրա հոգեկան խանգարման աստիճանական զարգացման նկարագրութիւնը։ Արելեանը միանգամայն պատճառաբանուած է համարում իգիրի հոգեկան հաւասարակշռութեան խաթարում։ մանկական սնուտիհապաշտ կրթութիւնը յաջոռու է, եւ ընտրեան զաւակ աժդահայ Սարօն «ընկնում է իր երեակայութեան առաջ»։ «Սարօնի երեակայութեան խանգարուելը եւ այդ խանգարման աստիճանաբար զօրանալը հոգեբանական մանրամասն ճշգրութեամբ պարզած է վեպի մէջ։ Եւ մարդ իշճալով ցաւում է այն աներկիշտ կրթիք վրայ, որ «Ճար անգամ միայն ծերի մահակով քշել է զայլերին ամրող վիհմակով», իսկ այժմ իր իսկ երեակայութեան սրբեղծած ծիաղներից, ինչքան էլ չի ուզում, սարսափահար է լինում»<sup>15</sup>։

Արելեանի յօդուածին հետեւում է Լեւոն Մանուկեանի գրախօսականը Սոլք ամսագրի թիւ 1ում։ Մանուկեանը, ողջունելով Թումանեանի գրական մոտքը, ընդգծում է կարետր մի առանձնայատկութիւն։ «Նա իր պոէմաների մէջ նման չէ ո՛չ մեր իին, ո՛չ նոր բանասպեղներին, նա կանգնած է առանձնակի, նա ինքնուրոյն է, նա մի տեսակ նորութիւն է մեզ համար։ Այդ առանձնայապեկութիւնը ժողովրդական տարրն է, որ կազմում է նորա վիպական ուղանատըների իսկական զարկերակը»<sup>16</sup>։ Խօսելով «Լոռեցի Սարօն»ի արժանիքներից՝ Մանուկեանը մաստանշում է անպանճ, գեղեցիկ լեզուով կերտած տեսարանները՝ սրտամօս ու հարազատ ընթերցողին։ Սակայն, ըստ գրախօսի, բովանդակութեան տեսանկիմից պոէմը թոյլ է, անհետաքրի, «անարժան ուշադրութեան», գլխաւոր հերոսն է՝ գրեթէ անկենտա։ Մանուկեանը պարզունակ եղուակացույցեան է յանգում, թէ՝ Թումանեանի նպատակն է բացայատել՝ ինչպէս է պահպանում Եւ փոխանցում ժողովրդական սնուտիհապաշտութիւնը։ Նկատելի է՝ այստեղ իսպատ բացակայում է Սարօնի հոգեբանովեանն ու խելազարութեանն առնչութ հարցերի ըննորդին։ Մանուկեանը, հետեւելով պոէմի սիմեհ արտաքին զարգացմանը, շրջանցում կամ չի նկատում կերպարի ներքին զարգացումը, հոգեբանական փոփոխութիւնները. ուստի պոէմի գաղափարական ընկալումը մնում է թերի, նոյնիսկ՝ շրացայայտուած։

Ուշագրաւ է, որ Թումանեանը 1893ին կատարելով որոշակի փոփոխութիւններ ու վերամշակումներ, փորձում է հոգեբանօրէն աւելի՝

համոզիչ դարձնել Սաքոյի խելագարութիւնը: Նոյն թոփ Նոյեմբերի 18ի նամակում, Աղյահեանին գրում է. «Ի դեպ, ասեմ, որ ես եմ նացուս հիմա եւ իհի գրածներս ուղղում. առաջին հավորից արդէն ուղղել եմ 'Հռոեցի Սաքօն' եւ 'Արեւն ու Լուսինը': Եթէ յիշում էք, «Հռոեցի Սաքոյի» մէջ Դուք մի սիսալ էք ցոյց գրախս, այդ սիսալը ես այժմ եմ գիտի ընկել եւ ուղղել. այդ պոէման կը լաւանապ»<sup>17</sup>: Որոշակիորէն ինչ սիսախ մասին է ակնարկում Թումանեանը՝ դժուար է ասել, սակայն պոէմը ենթարկում է վերամշակման: Զգուելով գեղարդանտական առաել համոզիչ երանգներով ներկայացնել Սաքոյի խելագարութիւնը՝ բանաստեղծը կատարում է յաւելումներ, որոնք, սակայն, ոչ միայն չեն նպաստում խնդրի բացայատմանը<sup>18</sup>, այլև՝ ընդիհակառակը:

1896ին առանձին գրուվ հրատարակում է Հռոեցի Սաքօն պոէմի երկրորդ տարբերակը, որը բաղկացած էր 476 տողից՝ ի տարբերութիւն առաջինի, որն ուներ 287 տող: Տպագրութեանը հետևում է Շիրվանզաքիի գրախօսականը. «Պ. Թումանեանի պոէման կարդացում է սիրով: Նրա ոճը բաւական սահման է, յանձերը՝ գեղեցիկ: Հեյինակը ունէ առհասարակ բանասպեղծական կրակ եւ զգացումների խորութիւն»<sup>19</sup>: Պոէմը, ըստ Վիպասանի, Թումանեանի «բանասպեղծական ծիրքի» «անհերքելի» ապացոյն է, թէպէս եւ զերծ չէ թերութիւններից՝ բարբառային բաների յաճախակի կիրառութիւն, համեմատութիւնների ու պատկերատրութեան բացակայութիւն, յատկապէս՝ բնութեան նկարագրութիւններում<sup>20</sup>: Գրախօսութեան վերջում Շիրվանզաքին մէկ անգամ եւս ընդգծում է. «Թումանեանը մեր երիկասարդ քնարերգակների շարքում առաջնակարգ գեղեցից մէկն է բոլուս զգացումների խորութեան գրեսակդիրց»<sup>21</sup>: Կարելի է հետեւնել, որ մեծանուն գրողը պոէմի արժանիքներից է համարում մարդկային ներաշխարհի վարպետ պատկերումը:

Տրամարանորէն հակառակ կարծիքն է ներկայացնում նոյն թոփ Մայիսի 29ին Մշակում տպագրուած Լեոյի գրախօսականը: Զժմտելով Թումանեանի բանաստեղծական շնորհը՝ գրախօսը բարձր է գնահատում պոէմի՝ բնութեան ու միջավայրի նկարագրութիւնները<sup>22</sup>. «Կորոներ կան լեռների նկարագրութիւնների մէջ, որոնք կապարեապէս գեղեցիկ են, ներկայացնում են հիացած սրբի սիրուն նուերները բնութեան ահեղ գրեսարաններին»<sup>23</sup>: Լէօն, այնուամենայնիւ, պոէմը համարում է նկարագրական բնոյիք, բովանդակութիւնից զորկ, իսկ Սաքոյի կերպարը՝ «մի աղօց սրբութագիծ»: Ըստ գրախօսի՝ կերպարի հոգեբանական զարգացումը թերի է, Սաքոյի նման աժդահայ հգիթի նմանօրինակ վախկոտութիւնն ու դրան հետեւղ խելագարութիւնը՝ անհամոզիչ: «...Նկայական հոգին ծնչելու համար հարկատը է հսկայական աղէգ,- գրում է Լէօն:- Սաքօն մի ակնթարթում չպիտի

ընկներ ահուտողի մէջ. սարսափելի ճգնաժամին «աժդահան» փախչելու մասին չէ մրցածում, այլ կորոի, մրցութեան մասին»<sup>24</sup>: Այստեղ առկայ է միայն նախապաշարուած մարդու սարսափը, այնինչ, Լեոյի կարծիքով, բաց է մնում քաջ հովով երեխայական վախիկոսութեան, հոգեկան զարգացումների պատճառաբանուած նախապայմանը: Այդուամենայնիւ, գրախօսը յոյս է յայտնում, որ եթե Թումանեանը «աշխափէ եւ բովանդակութեան, հոգու եւ մըրի մասին, կարող է փալ մեզ գեղեցիկ, կոկ եւ ախտօժելի պարմութիւններ ուրանաորդիք»<sup>25</sup>: Ուշագրաւ է, որ այս յօրուածում արուած դիտարկումները ներառում են գեղագիտական որոշակի սկզբունքներ:

Բոլորովին այլ միտուա էր հետապնդում Լեոյի «Ռուահայ Գրականութիւնը Սկզբից Մինչեւ ՍԵՐ Օթեղը» յօրուածը: Ի թիս այլոց գրախօսը անդրադառնում է նաեւ Թումանեանին՝ անուանելով նրան «Երան երգիչ»: Լեոյի գրելառում նկատելի է ընդգծուած միտումնատրութիւն: Խօսելով «Լոռեցի Սարօն» պոէմի մասին՝ Լէօն գրում է. «Բանասպելիք չէ նկարում, որ Սարօն իսկապէս մի ողրոմելի վախիկոր է, որ ծիծաղ է յարուցանում: Հոգերանութիւն չկայ, վիժիսարի հերոսի այդքան խճուկ վերջը բաւականաչափ բացարրուած չէ, արդարացրած չէ: Գոնէ պ. Թումանեանց յիշեր, որ ժողովրդական առասպելների մէջ հերոսները կոին են սկսում դեւերի դէմ, երկար մրցութիւնից յեզրոյ են ընկնուում: Ոչ մի աշխափանք՝ սեփական ձեռքով նկարած հերոսին պարզած հոգեկան աշխարհի մէջ զերեղելու համար: Մի խօսքով պ. Թումանեանց մարդ է գենել լուներում եւ չգիտէ, թէ ինչ անէ նրան»<sup>26</sup>: Հետեւելով Լեոյի վերը յիշատակուած ծաւարուն ուսումնասիրութեանը, եղրակացնուած ենք որ այն գրուել է մինչեւ Թումանեանի Բանասպելութիւններ երրորդ ժողովածուի լոյսընծայումը<sup>27</sup>, ինչը նշանակում է «Լոռեցի Սարօն»ի մասին արուած դիտողաբիւնները վերաբերում են երկրորդ տարբերակին: Այդ մասին խոստվանում է նաեւ Լէօն՝ տարիներ անց փորձելով պարզաբանել իր դիրքորոշմը:

Նկատենք, որ 1903ի ժողովածուի մէջ ընդգրկուած «Լոռեցի Սարօն» ենթարկուած էր որակական փոփոխութիւնների եւ ի տարբերութիւն նախորդի՝ հոգերանական հաւաստիութեան եւ գեղարուեստական կատարելութեան տեսանկիւնից անհամեմատ բարձր էր: 1904 Յունուարի 16ին Սշակի թիւ 2ում տպագրուում է Թումանեանի՝ Բանասպելութիւններ ժողովածուին (1903) վերաբերող Լեոյի գրախօսականը, որը դարձեալ կորած էր մշակականների անբարեացակամութեան կնիքը եւ ընդգծուած միտումնատրութիւնը: Ըստ Լեոյի Թումանեանի՝ իբրև գիտի մարդու, սկզբնապէս յացողուել է վառ գոյներով, բնութիւնից ստացած տպատրութիւններով հիանել երգեր,

պոէմներ, որոնցում գեղեցիկ նկարագրական էօնը կան: «Նրան յաջողութ է պայմերներ եւ տեսարաններ նկարել- դրանք արդարին զարդարակներ են, բայց բովանդակութեան գործողութեան մէջ լեռներ երգող բանաստեղծը մուս է միակողմանի, միամիտ»<sup>28</sup> եւ եղակացնում, որ 17 տարուայ ընթացքում Թումանեանը այդպէս էլ չի զարգացել ու «հասունացել». անձին՝ «Պոէտն Ու Մուսան» պոէմը ապացոյ է, որ նա սովորել է յանգեր կազմել եւ «իզուր բռնաբարում է իր միգրը՝ մի նոր բան գուած իներու համար»: Ըստ գրախօսի՝ Թումանեանը կողորել է նոյնիսկ ժողովրդական նիկոֆից «մի բան սկիզբելու վաղեմի ընդունակութիւնը» (իբրև ապացոյ նշում է «Սասունցի Դափի»ը) եւ «այժմ չունի կամ շատ քիչ ունի» շնորհը, որի միակ դրսերուում համարում է «Դէպի Անհոնը» պոէմը: Լէոյի կարծիքով՝ այստեղ «չկայ գործողութիւն, բայց կայ իոր զգացմունք, կան միքի թոհիցներ»<sup>29</sup>: Յօդուածի ուշադիր ընթերցուից նկատելի է դառնում, որ գրախօսը երբեմն հակասում է ինք իրեն. թում է՛ երկու տարբեր մարդկի են գնահատում Թումանեանին, մէկը՝ գրականութեան խոր տեսաբանը, միամը՝ Մշակի «թայֆայական» հոգեբանութեամբ առաջնորդուու ընադատը, որ երբեմն-երբեմն միակողմանի եւ մերկապարանոց յայտարարութիւններ է անում:

Հետաքրքրական է այն, որ գրախօսականում Լէօն բացարձակ լուսիթեան է մատնում «Լոռեցի Սարօն»: Կարելի է հետեւնել, որ վերամշակուած պոէմը որակապէս տարբերուել է նախորդից, եւ Լէօն այս անգամ խոսափել է որեւէ կարծիք յայտնելուց. բացասական արտայայտուել՝ գրախօսը չէր կարող, իսկ դրական գնահատականը հակասում էր ե՛ մօտ անցեալում հնչեցրած իր կարծիքին, ե՛ Մշակի պաշտօնական տեսակէտին: Մշակական ազդեցութիւնից ազատուելուց յետոյ Լէօն վերարժեւորում է իր կարծիքը<sup>30</sup>:

Նշենք, որ տարիներ անց, երբ Թումանեանը անառարկելի հեղինակութիւն էր, իսկ նրա բանաստեղծական տաղանդը՝ անժխտելի իրողութիւն, «Լոռեցի Սարօն» (արդէն վերջնական տարբերակը) դարձեալ գնահատուել է վերապահումով: Այսպէս, 1910ին Հանդիս Ամսօրեայի թիւ 1ում տպագրում է Գրիգոր Բալասանեանի «Շուսահայոց Նորագոյն Բանաստեղծները. Ցովիաններ Թումանեան» ինը մասից բաղկացած մեծածաւալ ուսումնասիրութիւնը, որտեղ ընդհանուր առմամբ բարձր գնահատելով Թումանեանի տաղանդն ու բանաստեղծական արուեստը՝ Բալասանեանը մերժողական կարծիք է յայտնում «Լոռեցի Սարօն»ի վերաբերեալ:

Յօդուածի Բ. եւ Գ. մասերում մանրամասն ներկայացնելով պոէմի նիկոր, բովանդակութիւնը՝ գրախօսն անցնում է պոէմի վերլուծութեանն ու մեկնարանութեանը: Ակնյայտ դրսերուած ժխտական մօտեցման

հիմքում Բայասանեանը դնում է հետեւեալ հարցադրումը՝ ինչո՞ւ են Սարդին իգիր անուանել, պոէմում չկան այն դէպքերն ու իրադարձութիւնները, որոնք երեւան են հանում Սարդի իգիտութիւնը: «Բանասդեղջ ասում է,- գրում է Բայասանեանը,- որ Սաքօն անվախ է, չգիտէ՝ ինչ բան է վախը, բայց բանից դուրս է գալիս, որ Թումանեանի Սաքօն ոչ միայն վախլուր է, այլև իր շուարից էլ փախչող է: Քաջերից վախեցող մարդը ինչ եերու կարող է յինել, որքան էլ փարուած յիներ նա նախապաշտումների ազդեցութեամբ»<sup>31</sup>: Ինչպէս նկատում ենք, Բայասանեանը իգիր անուան համար պահանջում է կենսականորէն ապացուցուած իմբեր, գաղափարական-հերոսական մի տիպ, որ յանոն ժողովորի ու հայրենիքի բարօրութեան անձնուիրութեան օրինակ է ցոյց տուել: «Ով չգիտէ, որ նախապաշտումները շարդ գար են ազդում մագաղ սերնդի վրայ եւ պէտք է դրանց դէմ զինուել: Բայց ինչ հարկ կայ քաջերից վախեցող մի խսարամիդ ապուշի դուրս բերել իգիր, կարծես միայն նրա համար, որ նա անպարճառ վախենում է քաջերից եւ իր կեանքում ոչ մի քաջազրութիւն չի արել եւ ոչ մի բերել երեւայ նրա «վեհանձնութիւնը»<sup>32</sup>:

Ըստ Բայասանեանի՝ պոէմում «չկայ հոգեբանութիւն», Սաքօն ներքին աշխարհը պատուած է մշուշով. փոխարէնը պոէմը հարուատ է բնութեան նկարագրութիւններով, որոնք իրապէս ապացոյ են, որ Թումանեանը իսկական բանաստեղծ է: Գրախօսն ափսոսում է, որ «այնքան գոլդրիկ նկարագրութիւնները յարկացուած են մի «երկշոր նապաստակ» եւ ծիծաղելի հերոսի, որ «երեւակայական վեհանձնութիւն» ունի եւ «աելյայդ, մշուշապատ քաջնազգական ոգի»»<sup>33</sup>:

Այսպիսով, Բայասանեանը հանդէս գալով Թումանեանի երկերի բարձր գնահատմամբ, կտրականապէս դէմ է արտայայտուած Սաքօն մարդկային տեսակի՝ իբրև կերպարի գեղարուեստական արտայայտութեանը: Նկատեի է, որ Բայասանեանը, առաջ քաշելով մի շարք հարցեր, անտեսում է մի կարեւոր հանգամանք. պոէմի թեման եւ դրա շորջ արտայայտուած բանաստեղծի գաղափարը բոլորովին այլ նպատակ են հետապնդուած: Թումանեանի ինտիրը չէ բացայատել իր հերոսի քաջութիւնն ու նոփրուածութիւնը ժողովորին, ուստի քաջ եւ անվախ լինելու ապացուցուեր պէտք չեն: Հարցը այստեղ առաւել նույր հոգեբանական մօտեցում է պահանջում:

Վախը մարդկութեանն ուժեցող հնագրյան երեսյաներից է, որի գիտական ուսումնասիրութիւնը ժամանակի ընթացքում նորանոր բացայայտումներ է արել<sup>34</sup>: Յայտնի է, որ մարդու բնաւորութեան, մտածողութեան, հոգեբանութեան ծեսաւորման գործում մեծ դեր է խաղում մանկութիւնը: «Նախադպրոցական մանկութեան տարիների համար բնորոշ է չկանխամտածուած ուշադրութեան եւ յիշողութեան

գերակշռող դերը,- գրում է յայտնի հոգեբան Վերա Մոլիխնան: - Երեխան ուշադրութիւն է դարձնում այն ամէնի վրայ, ինչը նրան հետաքրքրօամ է անմիջականորէն եւ յոյզեր է առաջացնուած: Նա մտապահում է այն, ինչը գորատում է նրա ուշադրութիւնը եւ «փնտնաբերաբար մտապահում է»:<sup>35</sup> Մեծահասակների պատմած տարատեսակ հեքիաթներն ու պատմութիւնները աներեսոյ ուժերի, կենդանիների, քաջերի եւ այլնի մասին խոր տպատրութիւնն են թողնում երեխայի աշխարհընկալման ծեսարդման վրայ եւ ապրում են նրա ինքնագիտակցութեան մէջ: Մասուկ հասակում ունեցած վախերը անհետեանը չեն մնում: Երեխն դրանք կարող են դառնալ հոգեկան եւ ջղային հիանդրութիւնների պատճառ եւ ի յայտ գալ տարիներ անց, երբ մարդը մտասեւեռով դրանց շուրջ այս մասին բազմատեսակ փաստարկումներ կան հոգեբանական գրականութեան մէջ (Զիգմոնդ Ֆրոյդ, Ալեքսանդր Չախարով, Ովիլյոմ Կրեյն, Եուրի Շերբատիխ, Տատիխանա Շիշովա....): Շիշովան, անդրադառնալով երեխաների անհատականութեան ծեսարդման գործում գեղարդաստեսական գրականութեան դերին, անչափ կարենուում է այն հանգամանքը, որ պատմուող կամ ընթերցուող ստեղծագործութիւններն անպայման պէտք է համապատասխանեն երեխաների տարիքային հոգեբանութեանը, զերծ լինեն վախ առաջացնող տարրերից, իսկ «ժողովրդական հեքիաթները պէտք է լինեն գրական մշակմամբ եւ նախատեսուած՝ յատկապէս երեխաների համար, քանի որ անմշակ տարրերակում չափազանց շատ են հնորեայ դաժանութիւնները: Առաւել գգուշ պէտք է մօտենալ ... առասպեսներին»:<sup>36</sup>

Այսպիսով՝ Բալասանեանն ուշադրութիւնը բեւռում է առաւելապէս հարցի արտաքին կողմին՝ անտեսելով ներքին խորութիւնը:

1912ին Գարուն Ալմանախի Յոր գրում տպագրուում է երկու յօդուած, որոնք պատկանում էին Դափթա Անանումի եւ Պոլոս Մակինցեանի գրչին: «Անցեալի Մեծարանքը վերնագրով ուսումնասիրութեան մէջ Անանունն անդրադառնում է Թումանեանի բանաստեղծական աշխարհին, փորձու բացայատել այն առանձնայատկութիւնները, որոնք բնորոշ են բանաստեղծի կերտած գիտաշխարհին: «Թումանեանի գիտացին ամբողջովին խմրուած է գոփմական բնագրներով, նա բնութիւնը բնակեցրել է ողիներով, որոնցից ինխափ երկիր է կրում... Հասագում են թովքութեան ու կախարդութեան ուժին, նորա նախապաշարուած են «հին-հին դարձի» ասանորութիւններով ու սովորութիւններով»<sup>37</sup>: Անանունի այս դիտարկումը կարծես համոզում է այն բանի, որ Սարօն լինելով «սարերի որդի», իրապէս կարող էր կորցնել հոգեկան հաւասարակշռութիւնը: Յօդուածագիրը մի տեսակ հաւատալով է մեկնաբանում Սարօնի գործողութիւնները. «Ամէն մի խշոց կամ յրջիւկոց նրա լարուած ուղեղի մէջ արձագանգ է փայխ, որպէս

«Ժանր ու սեւերես» ոգիների ճիշ ու աղաղակ, «զուռնա-դրհոյ»: Նա իրախոսում է իրան, ճիգ է թափում հեռու վանել զարզանդ պատկերներ, բայց ապարդին: Այլևս նրա համար ֆանտազիայի ստեղծագործութինը կարարեալ իրականութին է, եւ նա դիահապած դուրս է թռչում փարախսից, ընկնում սար ու ծոր, որոնք դարձեալ լցուած են այդ անողորմ ոգիներով<sup>38</sup>:

Գարուն Ավմանախում պոէմի մասին բացայայտ մերժողական կարծիք է յայսնում ժամանակի մէկ այլ լուրջ քննադասո՞ւ Մակինցեանը: Ըստ ամենայնի արժեստրելով Թումանեանի արուեստը՝ նա Սաքոյին համարում է «անկարեխութիւն»: «Անհասպահի է,- գրում է նա,- որ մեր օրերի չորանը, վերյիշելով գրադի գրոյները չարքերի մասին, այնքան խորս ու ինդենսի վեռապիր այն յուշերը, որ խելազարութեան հասմի: Մի այդպիսի չորան՝ որպէս գիպ, հոգեբանական անհնարութիւն է, իսկ եթէ դա մի եղակի, մի ուրոյն դէմք է... այդ դէպրում «Սաքօն» իսպան անկարար մի գործ է: ...Թումանեանը չի կարողացել մեզ այնպէս ներկայացնել իր հերոսի ասպրումները, նրա թնաւրութեան ուրոյն յարկութիւնները, որ մեզ համոզիչ թուայ նրա պարունակութիւնը»<sup>39</sup>:

Ինչպէս նկատում ենք, ժամանակի գրաքննադատների մեծ մասի համար անհամատելելի են ուժը, քաջութիւնը եւ վախի գգացումը, ուստի այս դիտակէտից էլ անընդունելի եւ անհամոզիչ է համարուել Սաքոյի կերպարը: Տիշդ է նկատել Ջրաշեանը՝ գրելով, որ տրուած գնահատականներում «ոչ միայն նսեմացում էր պոէմի գեղարուեսպական ուժը, այլև անդենում ...նրա նպագրակարդման առանձնայագրութիւնը՝ ցոյց գրալ, որ նահապետական մարդու հոգեբանութեան վրայ այնքան ուժեղ է սնահասար աւանդութեան իշխանութիւնը, որ նոյնիսկ Սաքոյի նման քաջ մարդը կարող էր հոգեկան հասարակշուութիւնը կորցնել»<sup>40</sup>:

Գեղարուեստական կատարելութեան հասնելու նպատակով, ինչպէս գիտենք, Թումանեանը պոէմում փոփոխութիւններ կատարել է, սակայն մի բանում բանաստեղծը միանգամայն համոզուած է եղել: Սաքոյի հոգեկան խանգարման ոչ-հաւաստի ու անբնական լինելու մասին կարծիքները Թումանեանը համարել է վիսալ: Դեռ 1890 Նոյեմբերի 29ին Անուշաւան Արքվեանին ուղղուած նամակում բանաստեղծը գրում է. «Մի շաբ յամառ կարծիք կայ (սրանց թիւը մեծ է, եւ առհասարակ լուսաւրուածներն են) «Լոռեցի Սաքոյի» մասին, թէ նա, ինձերվ առողջ եւ աներկիստ «իգիթ», չէր կարող վախենալ քաջերից եւ խելազարուել: Ես թէեւ շաբ պակասութիւն եմ խոսդովանում իմ գրում, բայց այս կարծիքն ես հաւան չեմ: Դու իս լաւ գիտես, որ կան մարդիկ՝ իգիթ մարդիկ, որ աշխարհը վրայ գայ՝ աչք չեն ճափի, ամա ինչ անես, մեռելից»:

անշունչ մեռելից վախում են, սպանես, մի աւերակի մօքից մէնակ անց չեն կենալ...»<sup>1</sup>:

Այսպիսով, «Լոռեցի Սաքօն»ի մասին ընկերական եւ հրապարակային արձագանգները իդորինակ գնահատականներ են եւ բացայայտում են ո՞չ միայն Թումանեանի ստեղծագործական աշխարհը, այլև ժամանակի գրաքննադատական միտքն ու հայեացները եւ այն միջավայրը, գրական մթնոլորտը, որտեղ ապրում, ստեղծագործում էր բանաստեղծը:

ԻԱ. դարի հետաւորութիւնից գնահատելով «Լոռեցի Սաքօն» պոէմը՝ նկատում ենք, որ այն ոչ միայն տախոյ է հնարաւորութիւն ճանաչելու նահապետական գիտը՝ իր բնորոշ կողմերով, այլև բացայայտում է մարդ արարածի ներաշխարհն ու նրա անհմանայի, թաքուն անկիւնները, որոնց յատով են երբեմն անհնարին թուացող, քայլ եւ իրական զգացողութիւններ ու ապրումներ: Դրանք տեսնելու եւ ըմբռնելու, գեղարվեստորդէն արտայայտելու համար անհրաժեշտ են Եւ բանաստեղծական տաղանդ, Եւ մարդկային ներաշխարհը թափանցելու հանճարեղ կարողութիւն ու նուրբ դիտողականութիւն, ինչը, մասնակի բացառութիւններով, աննկատ է մնացել ժամանակի գրաքննադատութեան կողմից:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Աւետիք Իսահակեան, Երկերի Ժողովածու Վեց Հակոբով, Հյր. 6, Երեան, Հայաստան Հրատ., 1979, էջ 41:

<sup>2</sup> Բնորոշումը Դերենիկ Դեմիրճեանին է (Յովիաննէս Թումանեան. Պատմանասիրութիւններ Եւ Հրապարակումներ, Հյր. 2, Երեան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1969, էջ 176):

<sup>3</sup> Գրականագէտ Զաւէն Աւետիսիսեանը, գուգադրելով եւ համադրելով ծեռագիր ու տպագիր տարբերակները, ուշագրաւ դիտարկում է կատարում, թէ՝ պոէմը անցել է ստեղծագործական մշակման 7 փուլ (Զաւէն Աւետիսիսան, «Լոռեցի Սաքօն Պոէմի Մշակման Փուերը», Յովիաննէս Թումանեան. Պատմանասիրութիւններ, Հյր. 2, էջ 175-201):

<sup>4</sup> Եղուարդ Քրբաշնան, Թումանեանի Պոէմները, Երեան, Երեանի Համալսարանի Հրատարակչութիւն, 1986, էջ 113-125:

<sup>5</sup> Թումանեանի առաջին տպագիր Երկը «Արեւ Ու Լուսին» առասպելն է: Բարձր գնահատելով Թումանեանի գրական տաղանդը՝ Ղազարոս Աղյեանը Աղքիր ամսագրում տպագրում է այն՝ դառնալով նրա գրական «կնքահայրը»:

- 
- <sup>6</sup> Յովհաննէս Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու 10 Հայոցով, Հդր. 9, Երեան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1997, էջ 23-24:
- <sup>7</sup> Նոյն, էջ 24:
- <sup>8</sup> Ուշագրաւ է, որ Աղայեանը, անքնական համարելով Սաքոյի խելագարութիւնը, Արութիւն եւ Մանուկ Վէպում անդրադառնում է իրենց գիտի քաջ ու աներկիստ տղաներին, որոնք, գիշերը գերեզմանատան կամ քանդուած եկեղեցու կողքով անցնելիս կարող էին սարսափահար լինել պատահական ցից քարից կամ ստուբրից: «Նա,- ասում է Արութիւնը,- եղաւու դեպքերում դժևսուում է էն, ինչ որ չկայ. նա ծայն էլ է յսում, թէպէս ոչ մի ծայն հանող չկայ: Նրա երեակայութիւնը խանգարուում է, եւ ինչ որ պիտի զգայարանքներից սրանար, երեակայութիւնն է թեղադրում զգայարանքներին» (Դազարոս Աղայեան, Երկերի ժողովածու, Հդր. 1, Երեան, Հայաստան Հրատ., 1962, էջ 72, 74-75):
- <sup>9</sup> Յովհաննէս Թումանեան, Պատմմասիրութիւններ եւ Հրապարակուումներ, Հդր. 4, Երեան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1994, էջ 282:
- <sup>10</sup> Եղիշէ Զարենցի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան (ԳԱԹ), Թումանեանի ֆոնս, թիւ 646:
- <sup>11</sup> Աւետիսիսեան, էջ 175-201:
- <sup>12</sup> Յովհաննէս Թումանեան, Պատմմասիրութիւններ, Հդր. 2, էջ 176:
- <sup>13</sup> Քանաքեղծովթիւններ առաջին ժողովածուի մասին շատ քարձ է արտայայտուել Գերզեան ճեմարանի երիտասարդ ուսուցիչ Ստեփանոս Լիսիցեանը: Նա յիշում է, որ ազատ դասերից մէկի ժամանակ ուասնողների խնդրանքով կարդացել է «Լոռեցի Սարօն», իսկ զանգը հնչելոց յետոյ նրան է մօտեցել Սողոմոն սարկաւագը՝ Կոմիտասը, եւ շշնջացել. «Լաւ է, չէ՞, լաւ է, չէ՞...» (Թումանեանը Ժամանակակիցների Յուշերում, 1969, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեան, էջ 348):
- <sup>14</sup> Վարսամ, «Մատենախօսութիւն. Յովհաննէս Թումանեանց. Բանաստեղծութիւններ», Նոր-Դար, թիւ 197, 1890:
- <sup>15</sup> Նոյն:
- <sup>16</sup> Լեռն Մանուկեան, «Յովհաննէս Թումանեանի
- 'Բանաստեղծութիւնները', Մուլթ, թիւ 1, 1891, էջ 95:
- <sup>17</sup> Թումանեան, Երկերի Լիակատար, Հդր. 9, էջ 123:
- <sup>18</sup> Ջրաշեան, էջ 118-120:
- <sup>19</sup> Շիրվանզադէ, «Մատենախօսութիւն», Տարագ, թիւ 16, 1896, էջ 257:

- 
- <sup>20</sup> Այս դիտողութիւնները իրօրինակ դասեր էին, որ օգնեցին երիտասարդ բանաստեղծին՝ յետագայում ստեղծելու իրապաշտ անգույական պատկերներ:
- <sup>21</sup> Շիրվանզադէ:
- <sup>22</sup> Լէօն յուշերում գրում է, որ այդ առաւելութիւնները նկատելու պատճառով ընդհարում է եղել իր եւ Մշակի գլխաւոր աշխատակիցների միջև (Թումանեալը ժամանակակիցների, էջ 51):
- <sup>23</sup> Լէօ, «Լոռեցի Սագօն» - Պումա Յովիաննէս Թումանեանցի», Մշակ, թիւ 57, 1896:
- <sup>24</sup> Նոյն:
- <sup>25</sup> Նոյն:
- <sup>26</sup> Լէօ, «Ռուսահայ Գրականութիւնը Սկզբից Մինչեւ Մեր Օրերը», Գեղունի, թիւ 1-10, 1903, էջ 63:
- <sup>27</sup> Ցայտնի է, որ 1903ի բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ «Մերժուած Օրենք» պումը ընդգրկուած չի եղել, իսկ վերը յիշատակուած ուսումնասիրութեան մէջ Լէօն անդրադարձել է նաեւ այդ պումին:
- <sup>28</sup> Լէօ, «Մատենագրութիւն. Յովիաննէս Թումանեան - Բանաստեղծութիւններ», Մշակ, թիւ 2, 1904:
- <sup>29</sup> Նոյն:
- <sup>30</sup> Թումանեանի մահուան առիթով գրուած յուշերում Լէօն իր բացասական զնահատականները փորձում է մեկնարանել իրեւ «մի ցաւալի զուգադիպութիւն». «Յովիաննէս Թումանեանի բանաստեղծութեան նովրուած փողերիս մէջ գրել էի, թէ Յովիաննէս Թումանեանի բանաստեղծութիւններն ամփոփուած են Մոսկուայում դրագուած երկու փոքրիկ հագործների մէջ... Զափազանց պարզ է, ուրեմն, որ ես գնահատել եմ Յովիաննէս Թումանեանին այն նիստերով, որ գալիք են Մոսկուայի այդ երկու հագործիկները... եւ ոչ 1903-1904-ինը» (Թումանեանը ժամանակակիցների, էջ 53-54): Լէօն, սակայն, 1904ի Մշակի թիւ 1ում գրախօսել էր Թումանեանի 1903ին լոյս տեսած Բանաստեղծութիւններ ժողովածուն, որի գնահատականները առաւել քանի բացասական էին: Ուստի, Թումանեանի արուեստին տրուած որակումները բոլորովին էլ զուգադիպութեան արդինք չին:
- <sup>31</sup> Գրիգոր Բալասանեան, «Ռուսահայոց Նորագոյն Բանաստեղծները. Յովիաննէս Թումանեան», Հանդէս Ամսօրեայ, թիւ 1, 1910, էջ 6:
- <sup>32</sup> Նոյն, էջ 7:
- <sup>33</sup> Նոյն, էջ 8:
- <sup>34</sup> Դեռևս 1887ին Նոր-Դար թերթի թիւ 126ում «Ժողովրդական Աղօթքներ» ուսումնասիրութեան մէջ Վ. Տաշրացին (թարգմանիչ,

մանկավարժ) գրում է. «Վախը՝ վախսկողութիւնը, մեր ժողովրդի կեանքի մէջ մեծ փեղ է բռնամ: Երեխայոպթինից գիտացին սնում է հերիաթներով, առասպելներով, սնորդապաշտոպթիններով, դրոնք յիքն են ...արհաւիրքներով և սարսափելի դեսարաններով: Այդ պարմութիւնները ծնուցանում են երան մէջ երկիր, սարսափ: Գիշեր ժամանակ նա աներկիր ման գալ չէ կարող որովհետեւ վախենում է սարգանաներից, դեւերից և չարերից: ... Գիշերը մի բոլի ճայն գիտացու համար դժոխից եղած ծայն է: Այս ժամանակ քարերն էլ ոդ են յինում եւ մեւ-մեւ ուրուականների պէս երեսում: Մի խօսքով, վախը իր շաբ զոհերն է գանում մեր ժողովրդի միջից»:

<sup>35</sup> Տարիքային եւ Մամկավարժական Հոգեբանութիւն, խմբ.՝ Ա. Վ. Պետրովսկի, Երեսան, «Լոյս Հրատ., 1977, էջ 74:

<sup>36</sup> T. Shishova, *Strakhi - Eto Seryozno: Kak Pomoch Rebyonku Izbavitsya ot Strakhov* (Վախերը լուրջ են. ինչպես օգնել երեխային ծերպազատուելու վախից), Մոսկով, Dom-Iskatei Հրատ., 1997, էջ 88:

<sup>37</sup> Դափիր Անանուն, «Անցեալի Մեծարանքը», Գարուն Գրական-Քննադադարական Ալմանախ, Գիրք 3, Մոսկով, Տպ. Ե. Աւտիքեանի, 1912, էջ 113, 115:

<sup>38</sup> Նոյն, էջ 121:

<sup>39</sup> Պոլոս Մակինցեան, «Դիմագծեր», Գարուն Գրական-Քննադադարական Ալմանախ, Գիրք 3, Մոսկով, Տպ. Ե. Աւտիքեանի, 1912, էջ 261:

<sup>40</sup> Զրրաշեան, էջ 114-115:

<sup>41</sup> Թումանեան, Երկերի Լիակագրար, Հդր. 9, էջ 54-55:

---

"LORETSI SAKO" (SAKO FROM LORI): HOVHANNES TUMANYAN'S POEM  
AND ITS LITERARY CRITICISM BY CONTEMPORARIES  
(Summary)

YEVA MNATSAKANYAN  
mnacakanyaneva@mail.ru

Tumanyan's poem, "Loretsi Sakon" (Sako from Lori) is a rare case in Armenian literature as it elicited an unsurpassed amount of criticism and contradictory assessments.

The paper surveys the contemporary critiques of the poem. It analyses the nature of the critiques as they argued whether a strong, courageous figure like the hero of the poem, Sako, could fall victim to superstitions and become psychologically ill.

The literary critics of the time, with few exceptions, rejected the author's combination of courage and fear from superstitions in one person. They argued that such a duality in a hero's personality was not convincing.

The paper concludes, however, that notwithstanding the modifications and improvements Toumanyan made to the poem based on the criticism, he did not shift from his conviction and maintained the conceptual climax of the poem, that superstition – particularly in those days – could make such courageous people its prey.